ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

# ՇԱՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ - 2006

ՀՐԱՄԱՆԱՒ

## Ն. Ս. Օ. Տ. Տ ԳԱՐԵԳՆԻ Բ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՑԱՆԿ


Տէրունական աղօթք . . . . . . . . . . . . .6
Հայրապետական մաղթերգ . . . . . . .8
Հրաշափառ աստուած . . . . . . . . . .10
Էջ Միածինն ի Հօրէ . . . . . . . . . . . . .12
Այսօր տօն է . . . . . . . . . . . . . . . . . .14
Խորհուրդ մեծ . . . . . . . . . . . . . . . .16
Ով զարմանալի . . . . . . . . . . . . . . . .18
Այսօր ձայնն հայրական . . . . . . . . .19
Աւետիս ծննդեան . . . . . . . . . . . . . .20
Ամենասուրբ Երրորդութեանն . . . . .22
Նորահրաշ . . . . . . . . . . . . . . . . . . .24
Արեգակն արդարութեան . . . . . . . .28
Երկնային հրաւիրակօք . . . . . . . . .30
Բաց մեզ, Տէր . . . . . . . . . . . . . . . .32
Ու՞ր ես, մայր իմ . . . . . . . . . . . . . . .33
Շնորհեա մեզ, Տէր . . . . . . . . . . . . .34
Թագաւոր գոլով . . . . . . . . . . . . . . .38
Որ վերօրհնիս . . . . . . . . . . . . . . . . .40
Այսօր յարեաւ ի մեռելոց . . . . . . . . .42
Քրիստոս յարեաւ . . . . . . . . . . . . . .44
Գովեա Երուսաղէմ . . . . . . . . . . . .45
Նոր ծաղիկ . . . . . . . . . . . . . . . . . .46
Փառք Յարութեան քո, Տէր . . . . . . .48
Համբարձաւ Տէրն մեր . . . . . . . . . .50
Առաքելոյ աղաւնոյ . . . . . . . . . . . .52
Անձինք նուիրեալք . . . . . . . . . . . .54
Խնկի ծառին . . . . . . . . . . . . . . . . .56
Մայր եւ կոյս . . . . . . . . . . . . . . . . .58
Ուրախ լեր, սուրբ եկեղեցի . . . . . . .60
Որք զարդարեցին . . . . . . . . . . . . .62
Աշակերտք քրիստոսի . . . . . . . . . . .64
Ստեփաննոս քաղցրիկ տատրակ . . .66
Առաւօտ լուսոյ . . . . . . . . . . . . . . .68
Աշխարհ ամենայնի . . . . . . . . . . . .71
Նայեաց սիրով . . . . . . . . . . . . . . .75
Ի քէն հայցեմք . . . . . . . . . . . . . . .79
Սուրբ ես, Տէր . . . . . . . . . . . . . . .84
Տէր, ողորմեա . . . . . . . . . . . . . . . .87

# ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

*մշ. Խորէն Մեյխանեճեանի*




Հայր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն Քո.
Եկեսցէ արքայութիւն Քո,
Եղիցին կամք Քո
որպէս յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր,
Եւ թող մեզ զպարտիս մեր,
Որպէս եւ մեք թողումք
մերոց պարտապանաց,
Եւ մի՛ տանիր զմեզ
ի փորձութիւն,
այլ փրկեա՛ զմեզ ի չարէ.
Զի Քո է արքայութիւն
եւ զօրութիւն
եւ փառք
յաւիտեանս.
Ամէն:



# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԵՐԳ

*Կոմիտաս վրդ.*

*Վեհ, ջերմօրէն*






Ամէն Հայի սրտից բըխած,
Լըսիր այս ձայնն, ո՜վ Աստուած.

Երկար կեանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հօր.

Տէ՜ր, անսասան պահիր դու միշտ,
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:

# ՀՐԱՇԱՓԱՌ ԱՍՏՈՒԱԾ

(Շարական Ս. Գրիգոր Լուսաւորչի)

*Ներսէս Շնորհալի*

*Չափաւոր, ծանր*







Հրաշափառ Աստուած եւ
միշտ բարեխնամող.
որ յառաջ գիտութեամբ
զփըրկութիւն Հայաստանեայց
սկզբնաւորեալ.
ի պարթեւական մեղապարտ
ազգէն լուսաւորիչ մեզ
շնորհեցեր.
վասն որոյ բարեխօսութեամբ
սորա Փըրկիչ կեցո ըզմեզ.
այժմ եւ ի քո յահաւոր
գալըստեանն:
Թագաւոր երկնաւոր,
զեկեղեցի Քո անշարժ
պահեա,
եւ զերկրպագուս անուանդ
Քում պահեա ի
խաղաղութեան:

# ԷՋ ՄԻԱԾԻՆՆ Ի ՀՕՐԷ

(Շարական Ս. Էջմիածնի)

*Սահակ Ձորափորեցի*








Էջ միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա:

Ձայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի, պատմէր ցնծութեամբ

հաւատացեալ արքային:

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց

մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

# ԱՅՍՕՐ ՏՕՆ Է

## (Ս. Ծննդեան տաղ)

*Աւանդական տարբերակ*








Այսօր տօն է սուրբ ծընընդեան աւետիս.
Տեառըն մերոյ եւ յայտնութեան, աւետիս:

Այսօր սուրբ կոյսն արդարութեան, աւետիս.
երեւեցաւ ի մէջ մարդկան աւետիս:

Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս.
Երեւեցաւ ի մէջ մարդկան, աւետիս:

Այսօր Հրեշտակք յերկնից իջան, աւետիս.
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն աւետիս:

# ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ

## (Ս. Ծննդեան շարական)

*Մովսէս Խորենացի*







Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:



# ՈՎ ԶԱՐՄԱՆԱԼԻ

(Ջրօրհնէքի երգ)

*Գրիգոր Պահլաւունի*
*մշ. Կոմիտաս Վարդապետի*

♩= 50 *Յափշտակութեամբ*




Ով զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ. Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ:
Կամէր մըկըրտիլ ի ծառայէն իւրմէ. չառնոյր Կարապետն, ըզմըկըրտելն ի յանձն:
Գետ, մի զարհուրիր, քո Արարիչն եմ ես. եկեալ մըկըրտիմ եւ լըւանամ ըզմեղս:



# ԱՅՍՕՐ ՁԱՅՆՆ ՀԱՅՐԱԿԱՆ

(Ջրօրհնէքի տաղ)

*Յովհաննէս Երզնկացի*
*մշ. Կոմիտաս Վարդապետի*

*զնայուն* ♩= *56 ուրախական եւ շնորհալի*




Այսօր ձայնըն Հայրական յերկնից իջեալ հաճոյական,
սիրեցելոյ Որդւոյ վըկայ, այ յորդորէ,
գետ, յորդորէ, գետ Յորդանան:
Յորդորական ձայնիւ երգէր մեծ Կարապետըն Յովհաննէս:

# ԱՒԵՏԻՍ ԾՆՆԴԵԱՆ

*մշ. Խորէն Մեյխանեճեանի*








Քրիստոս ծընաւ եւ յայտնեցաւ,
Քրիստոս ծընաւ եւ յայտնեցաւ,
Քրիստոս ծընաւ եւ յայտնեցաւ:
Այսօր տօն է սուրբ ծընընդեան, Տեառըն մերոյ եւ յայտնութեան:
Այսօր արեւն արդարութեան երեւեցաւ ի մէջ մարդկան:
Այսօր հրեշտակք երկնից իջան, ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն:
Այսօր սուրբ կոյսն անապական ծընաւ եբեր զանմահ արքայն:
Քրիստոս ծընաւ, Քրիստոս ծընաւ եւ յայտնեցաւ, Նըմա փառք յաւիտեանս. ամէն:

# ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ

## (Ս. Սարգիս զօրավարի շարական)

*Վարդան Արևելցի*







Ամենասուրբ Երրորդութեանն ընտրեալ ծառայ եւ հաւատարիմ. յաղթող սպառազէն եւ քաջ նահատակ. երագահաս սուրբըղ Սարգիս շնորհաց օթեւան.
բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Թագաւորին երկնաւորի սուրբ զօրապետ եւ մենամարտիկ. սիրով անմահին խաչեալ յաշխարհի. երագահաս սուրբըղ Սարգիս խաչի պըսակեալ.
բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Արեգականն արդարութեան մեծ կարապետ, Պայծառ արուսեակ, ցոլացեալ յարեւմըտից ի յելս արեւու. երագահաս սուրբըղ Սարգիս անշէջ ճառագայթ.
բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

# ՆՈՐԱՀՐԱՇ

## (Ս. Վարդանանց շարական)

*Ներսէս Շնորհալի*

*Չափաւոր*









# ՆՈՐԱՀՐԱՇ

Նորահրաշ պըսակաւոր, եւ զօրագլուխ առաքինեաց.
Վառեցար զինու Հոգւոյն արիաբար ընդդէմ մահու.
Վարդան քաջ նահատակ, որ վանեցեր ըզԹըշնամին,
Վարդագոյն արեամբըդ քո պըսակեցեր զեկեղեցի։

Երկնաւոր Թագաւորին՝ զինու յաղԹեալ պատերազմին.
Խոհական իմաստուԹեամբ խոհեմացեալ անճառապէս.
Խորէն խորհրդական եւ ծանուցեալ անուն բարի,
Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ։

Րենական լոյսով լցեալ արիացեալն քաջն Արտակ,
ԹաԹաւեալ ի կարմրուԹիւն բոսորային բղխեալ աղբերն.
Զփրկականն ըմպեալ զբաժակ եւ մկրտեալ արեամբն իւրով,
Դասակցեալ ընդ անմարմնոցն ԵրրորդուԹեան երգել զփառս։

Սրբափայլ զգեստուք պճնեալ՝ ի յերկնաւոր հանդիսադրէն,
ԵրրորդուԹեամբն զօրացեալ վանեալ զամուրս բանսարկուին.
Հմայեակ Հօր ընծայեալ Որդւոյ գոլով չարչարակից,
Հոգւովն յաղԹեալ պատերազմին եւ չարասէր Թագաւորին։

Էական բարւոյն դիտմամբ՝ ընդդէմ մեղացն վառեցաւ,
Տարագնաց ելիւք յերկինս պարակցեալ ընդ անմարմնոցն.
Տաճատ, զարմանալի տաճար եղեալ ԵրրորդուԹեանն,
Տէրունեան սուրբ խորհրդոյն տուն եւ տեղի արժանացեալ։

Ըստացեալ զհաւատոյ՝ վահան յուսոյն զրահիւք ծածկեալ,
Զփրկականն սաղաւարտ՝ ի գլուխ եդեալ գնչան խաչին.
Վահան վեհ երեւեալն, որ մանկուԹեամբ նահատակեալ,
Խաչելոյն վկայ եղեալ՝ պսակեցաւ արեամբն իւրով։

Ի հոտ անոյշ ողջակիզեալ մատուցանէր զինքն նուէր,
Բանաւոր պատարագաւ ընծայելով Հօր ի յերկինս.
Արշէնն ցանկալի արդարուԹեամբն ճոխացեալ,
ԻմաստուԹեամբ պայծառացեալ յեօԹնարփեան շնորհաց Հոգւոյն։



Երկոքումբք հարազատովք ընտրելագոյն նահատակօք,
Յառաջեալ յամենեցունց՝ գլուխ եւ աւարտ մարտիրոսաց,
Նախաշաւիղ գալով բարեաց յառաջադէմն Գարեգին,
Ընկալեալ զբրաբիոնն յաղԹանակ նահատակացն։

Րամկական խումբ հազարաց եւ երեսնից Թիւ ընդ վեցից,
Որք ընդ նոսին նահատակեալք արիաբար պատերազմեաւ.
Եւ հեղին զարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ,
Ընդ նոսին պսակելով ի յերկնաւոր հանդիսադրէն։

ԳոհուԹեամբ փառատրուԹիւն՝ ԵրրորդուԹեանդ նուագեմք,
ԲազմուԹեամբ պսակելոցս զմեօք մածեալ առաքինեացս.
Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան,
Ունելով միշտ բարեխօս՝ զճգնուԹիւն մարտի սոցա։



# ԱՐԵԳԱԿՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

(Ս. Վարդանանց շարական)

*Ներսէս Շնորհալի*









*²ñ»·³ÏÝ ³ñ¹³ñáõÃ»³Ý Ç Ð³Û³ëï³Ý Í³·»³É å³ÛÍ³é³óáõó»ñ ëáõñµ ½»Ï»Õ»óÇ Ñ»ÕÙ³Ùµ ³ñ»³Ý ëÁñµáóÝ.*
*Ù³ÕÃ³Ýûù ëáó³ ËÁÝ³Û»³ Ç Ù»½, å³ñ·»õ³ ïáõ µ³ñ»³ó »õ áÕáñÙ»³ ùá ³ñ³ñ³Íáó:*

*ä³ÝÍ³ÉÇ ëáõñµ ½³õ³Ïûù Ñáí ÇõùÁÝ ½Áõ³ñÃáõÝù, Ññáí Ñá·õáÛÝ ßÇçáõóÇÝ Á½µáóÝ Á½Ïñ³Ï³å³ßï å³ñëÇóÝ.*
*Ù³ÕÃ³Ýûù ëáó³ ËÁÝ³Û»³ Ç Ù»½ å³ñ·»õ³ ïáõ µ³ñ»³ó »õ áÕáñÙ»³ ùá ³ñ³ñ³Íáó:*

*ä³ñÃ»õ³Ï³Ý ï»ë³ÝáÕÇÝ Û³é³ç³·áÛÝ ³½¹»óáõÃ»³Ùµ, ½Ñ³õ³ïáÛ áñ¹Çë ëÁñµáÛÝ ¶ñÇ·áñÇ åÁë³Ï³½³ñ¹ ï»ëÉ»³Ùµ.*
*Ù³ÕÃ³Ýûù ëáó³ ËÁÝ³Û»³ Ç Ù»½ å³ñ·»õ³ ïáõ µ³ñ»³ó »õ áÕáñÙ»³ ùá ³ñ³ñ³Íáó:*

# ԵՐԿՆԱՅԻՆ ՀՐԱՒԻՐԱԿՕՔ

## (Ս. Վարդանանց շարական)

*Ներսէս Շնորհալի*







Երկնային Հրաւիրակօք կոչեցեալք ի սկըզբանէ, փըրկական Բանին պատմողք եւ պարծանք Հայաստանեայց, դասակցեալք ընդ զօրս անմարմնականացն:

Ըզվիշապն անդընդային նըմանեալ փարաւոնի, զգազանացեալ ըզթագաւորն գործակցօք չարին սուզեալ. զյաղթական երգէն զօրհնութիւնըս Տեառն:

Հաւատոյ զինուք վառեալ Մամիկոնեան զօրավարին, յաշխարհօրէն պատերազմին ախոյեան եկեղեցւոյ, անճառիցն եղեւ ժառանգորդ երկնից:

Ախտակցաբար արտասուեսցուք զուրացողսըն Հաւատոյ, ընդ սըրբոց Հայրապետացն երգելով զփառս ի բարձունս փըրկողին ըզմեզ մաղթանօք սոցա:

# ԲԱՑ ՄԵԶ ՏԷՐ

(Դռնբացէքի երգ)




*Բաց մեզ Տէր:*
*Բաց մեզ Տէր:*
*Բաց մեզ Տէր ըզդուռն ողորմութեան,*
*որ ողբալով կարդամք առ քեզ:*

# ՈՒ՞Ր ԵՍ, ՄԱՅՐ ԻՄ

( Խաչելութեան երգ )

*մշ. Արա Պարթեւեանի*




Ո՞ւր ես, մայր իմ. քաղցր եւ անուշ. Սէր ծընողիդ զիս այրէ:
Լըցան աչք իմ, դառն արտասուօք. Ոչ ոք ունիմ, որ սըրբէ:
Ազգ արարէք մօրն իմոյ, որ գայ կարօտն իւր առնէ:
Գուցէ երբեք յետոյ եկեալ եւ զիս մեռեալ գըտանէ:
Ուր ես, առաջ լոյս իմ Որդեակ. Հոգւոյս հոգի, իմ զաւակ:

 

# ՇՆՈՐՀԵԱ ՄԵԶ, ՏԷՐ











Շնորհեա մեզ Տէր, ի գիշերի զերկնային զխաղաղութիւն քո. եւ պահեա ը զմեզ ի պատրանաց թըշնամւոյն ամենայաղթ զօրութեամբ սուրբ խաչի քո: Տէր Աստուած փըրկութեան իմոյ ի տուէ կարդացի եւ ի գիշերի առաջի քո: Մըտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, խոնարհեսցի ունկըն քո ի խընդըրուածս իմ: Եկեսցէ առ մեզ Տէր պահապան ի քէն, եւ պահեսցէ ըզմեզ յամենայն ժամ: Առաքեա ի մեզ Տէր ըզզօրութիւն սըրբոյ խաչին, որ պահեսցէ ըզմեզ յամենայն ժամ: Արժանի արա, Տէր, զերեկըս զայս խաղախութեամբ, եւ առանց փորձութեան անցո ըզմեօք: Արժանաւորեա, Տէր, զգիշերըս զայս խաղաղութեամբ եւ առանց մեղաց պահելով ըզմեզ:

Ընդ մեզ Տէր Աստուած, գիտասջիք հեթանոսք եւ պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է: Եւ լըւա  րուք զայս ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի զի Աստուած ընդ մեզ է: Եւ լըւարուք զայս ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի, զի Աստուած ընդ մեզ է: Եւ հըզորացեալքըդ պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է: Եւ զի թէպէտ եւ դարձեալ զօրանայք՝ դարձեալ ի պարտութիւն մատնեսջիք, զի Աստուած ընդ մեզ է: Եւ ըզխորհուրդըն զոր խորհիք՝ խափանէ Տէր, զի Աստուած ընդ մեզ է: Եւ ըզբանըն զոր խօսիք՝ մի մնասցէ առ ձեզ, զի Աստուած ընդ մեզ է: Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք, եւ ոչ խռովիցուք, զի Աստուած ընդ մեզ է: Եւ ըզՏէր Աստուած մեր փառաւոր արասցուք, եւ նա եղիցի մեզ յերկիւղ, զի Աստուած ընդ մեզ է; Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա, եւ նա եղիցի մեզ ի սըրբութիւն, զի Աստուած ընդ մեզ է: Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա, եւ նա եղիցի մեզ ի փըրկութիւն, զի Աստուած ընդ մեզ է: Եւ ահաւասիկ ես եւ մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած, զի Աստուած ընդ մեզ է: Եւ ժողովուրդ որ նըստէր ի խաւարի՝ ետես ըզլոյս մեծ, զի Աստուած ընդ մեզ է: Եւ որ բնակեալդ էք ի խաւարի եւ ի ստուերըս մահու, լոյս ծագեսցի առ ձեզ, զի Աստուած ընդ մեզ է: Եւ քանզի մանուկ ծընաւ, որդի եւ տըւաւ մեզ, զի Աստուած ընդ մեզ է: Եւ որոյ իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոց, զի Աստուած ընդ մեզ է: Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհըրդոյ հրեշտակ, զի Աստուած ընդ մեզ է: Եւ սքանչելի խորհըրդակից, զի Աստուած ընդ մեզ է: Եւ Աստուած հըզօր իշխան, զի Աստուած ընդ մեզ է: Եւ իշխան խաղաղութեան Յայր հանդերձելոյ յաւիտենին. Տէր Աստուած ընդ մեզ է:

Եւ փառք Յօր եւ Որդւոյ եւ Յոգւոյն սըրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

# ԹԱԳԱՒՈՐ ԳՈԼՈՎ

(Ծաղկազարդի շարական)







*Թագաւոր գոլով քո յաշխարհ մըտեր ի քաղաքն Երուսաղէմ, նըստեալ ի վերայ հողեղէն նոր յաւանակի, կոչել զհեթանոսս յերկրըպագութիւն:*

*Ծերքն ոստովք ձիթենեօք եւ տղայքն ոստովք արմաւենեօք, եւ երամ երամ դասուքն աղաղակէին, օվսաննա, օրհնեալ եկեալ ի յանունըն Տեառն:*

*Ցընծացաւ սուրբ Սիօն, բերկրեցան սուրբ եկեղեցիք, եւ խընդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ, օրհնէին զգալուստ քո փրկիչ յաշխարհ:*

# ՈՐ ՎԵՐՕՐՀՆԻՍ

(Ծաղկազարդի երգ)







*Որ վերօրհնիս յաթոռըս քերովբէից. ի վերայ նըստիլ յաւանակի Հաճեցար, բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել:*

*Ուստի եւ մեք զյաղթական օրհնութեան ըզձայն՝ մատուցանեմք քեզ թագաւոր փառաց՝ ընդ տղայսն օրհնաբանելով. բարեբանեալդ որ եկիրդ ի կեցուցանել:*

*Ովսաննա ի բարձունս ալէլուիա. բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն ալէլուիա. եւ օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ Տեառն ալէլուիա:*

*Այսօր զուարճացան տիեզերք գալըստեամբ Աստուածորդւոյն յԵրուսաղէմ եւ գոչէին հընչմամբ երգով օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:*

# ԱՅՍՕՐ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

(Ս. Զատկի շարական)

*Ներսէս Լամբրոնացի*







Այսօր յարեաւ ի մեռելոց Փեսայն անմահ եւ երկնաւոր. քեզ աւետիք խընդրութեան Հարսն ի յերկրէ եկեղեցի. Օրհնեա ի ձայն ցընծութեան, զԱստըւած քո Սիոն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունըս քո. լուսաւորեա Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա ի ձայն ցընծութեան, զԱստըւած քո Սիոն:

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան Յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա ի ձայն ցընծութեան զԱստըւած քո Սիոն:

# ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ
## (Աւետիս Ս. Յարութեան)




Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց. Նմա փառք յաւիտեանս ամէն:



# ԳՈՎԵԱ ԵՐՈՒՍԱՂԷՄ
## (Ս. Զատկի շարական)

*Ներսէս Շնորհալի*
*մշ. Մ. Եկմալեանի*




Գովեա Երուսաղէմ ըզՏէր: Յարեաւ Քրիստոս ի մեռելոց. ալէլուիա:
Եկայք ժողովուրդք, երգեցէք Տեառն՝ ալելուիա:
Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:
Յարուցելոյն ի մեռելոց, ալէլուիա, որ զաշխարհըս լուսաւորեաց՝ ալէլուիա:

# ՆՈՐ ԾԱՂԻԿ

## (Յարութեան տաղ)

*Ներսէս Շնորհալի*

*Խաղաղ, զուարթանքով*







Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ, այսօր ի Նոր գերեզմանէն:
Երեւեալ լոյս յարութեան, աւետիս, ի խաւարի ստուերաց մահու, աւետիս:
Յարեաւ Քրիստոս, աւետիս:
Բենական լուսոյ սաղարթք, ի Հոգեւոր գարնան փըթթեալք:
Երեւեալ լոյս յարութեան, աւետիս, ի խաւարի ստուերաց մահու, աւետիս:
Յարեաւ Քրիստոս, աւետիս:
Երփնազարդ Հոգւոցն տունկք կանաչացան կենդանութեամբ:
Երեւեալ լոյս յարութեան, աւետիս, ի խաւարի ստուերաց մահու, աւետիս:

# ՓԱՌՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՈ ՏԷՐ

## Երգ՝ զկնի իւղաբերից աւետարանին







Փառք յարութեան քո, Տէր. ոչ դադարե-
ցայց, Քրիստոս, օրհնել ըզքեզ զամենայն
աւուրս կենդանութեան իմոյ: Փառք
յարութեան քո, Տէր. ոչ դադարեցայց,
Յիսուս, գովել ըզքեզ զամենայն աւուրս
կենդանութեան իմոյ: Ես ոչ դադարեցայց,
փրրկիչ, փառաւորել ըզքեզ զամենայն
աւուրս կենդանութեան իմոյ: Ի գիշերի
համբարձէք ըզձեռըս ձեր ի սըրբութիւն,
եւ օրհնեցէք ըզՏէր: Աստ օրհնեցէք
ամենայն ծառայք Տեառն ըզՏէր ի
սըրբութիւն, եւ օրհնեցէք ըզՏէր:

# ՀԱՄԲԱՐՁԱՒ ՏԷՐՆ ՄԵՐ

(Համբարձման շարական)

*Ներսէս Լամբրոնացի*

*Չափաւոր*







Համբարձաւ Տէրըն մեր յերկինս՝ ասելով աշակերտացն նըստարուք ի քաղաքիդ Երուսաղէմ. մինչեւ զգենուցուք զօրութիւն ի բարձանց:

Միաբանեալ սուրբ առաքեալքըն միախորհ եւ միակրօն միաբան, նըստէին ի սուրբ վերնատանն. եւ ակն ունէին գալըստեան Սուրբ Հոգւոյն:

Յանկարծակի եհաս ի նմանութիւն. լուսոյ փայլման. եւ եկեալ բնակեցաւ ի սուրբ առաքեալսն, մինչդեռ նըստէին ի սուրբ վերնատանն:

# ԱՌԱՔԵԼՈՑ ԱՂԱՒՆՈՑ

## (Յոգեգալստեան շարական)

*Մովսէս Խորենացի*







Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց, ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն, մինչդեռ նըստէին ի սուրբ Վերնատանն:

Աննիւթական աղաւնի, անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ. զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր եւ զմիւս անգամ գալուստն. զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս, եղողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն, եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

# ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ

## (Ս. Հռիփսիմեանց շարական )

*Կոմիտաս Աղցեցի*







Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի. երկնաւոր նահատակք եւ կուսանք իմաստունք. ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ. մայր Սիովն դստերօքն իւրովք:

Բարբառք երկնաւորք լցին զերկիր, քանզի հոտ անուշից բուրեցայք ի Քրիստոս. ողջակէզք բանաւորք եւ զոհք փրկութեան եւ ուրախք անարատք ընծայեալք Աստուծոյ:

Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ, յիմարեցոյց զթագաւորն եւ պակեան հեթանոսք. ի գեղ սքանչելի աստուածատուր կուսանացն տարփացեալ զուարթունքն ընդ մարդկան տօնեցին:

# ԽՆԿԻ ԾԱՌԻՆ

## (Ս. Աստուածածնի տաղ)









Խընկի ծառին նըման ես, պըտուղ դու քաղցրահամ ես, զբարի պըտուղ բերեալ ես, Աստուածածին մեղայ քեզ։

Դու հողանիւթ սրովբէ ես, հարսն ի յերկրէ յերկինս ես, զԱստուած մարմնով ծընեալ ես, Աստուածածին մեղայ քեզ։

Դու յորդառատ աղբիւր ես, ծարաւելոց արբումն ես, մեղաւորաց քաւիչ ես, Աստուածածին մեղայ քեզ։

Դու լուսեղէն տաճար ես, ոսկիապատ խորան ես, դու մարգարիտ անգին ես, Աստուածածին մեղայ քեզ։

Դու անթառամ ծաղիկ ես, փունջ մանուշակ ազնիւ ես, վարդի նըման հոտով ես, Աստուածածին մեղայ քեզ։

# ՄԱՅՐ ԵՒ ԿՈՅՍ

## (Ս. Աստուածածնի տաղ)

*Ա. Պարթեւեան*







Մայր եւ կոյս աղախին Քրիստոսի, որ բարեխօսդ ես միշտ աշխարհի, քեզ երանեն ամենայն ազինք, քեզ երանեն ամենայն ազինք, մաքուր աղաւնի եւ Հարսն երկնից Մարիամ՝ տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին. քեզ երանեն ամենայն ազինք:

Մայր եւ կոյս աղախին Քրիստոսի, որ բարեխօսդ ես միշտ աշխարհի, քեզ երանեն ամենայն ազինք. քեզ երանեն ամենայն ազինք՝ մայր եւ կոյս, Հարսն երկնից, քեզ երանեն ամենայն ազինք:

# ՈՒՐԱԽ ԼԵՐ, ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ

(Ս. Էջմիածնի շարական )

*Սահակ Ձորափորեցի*







Ուրախ լեր Սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով. եւ զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք:

Խնդա յոյժ դուստր Սիովնի, քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո նորոգմամբ, եւ Թագաւորն երկնաւոր Հաճեցաւ բնակիլ ի քեզ:

Ընդ դասս երկնաւոր զօրացն՝ վերառեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառատրուԹիւնս, ուրախ լեր Հարսն անարատ անքննին քո խորՀրդով:

# ՈՐՔ ԶԱՐԴԱՐԵՑԻՆ

(Ս. Թարգմանչաց շարական)

*Վարդան Արեւելցի*

*Չափաւոր*









Որք զարդարեցին տընօրինաբար զիմաստս անեղին, Հաստատելով յերկրի ըզգիր կենդանի՝ Հովուել ըզհօտ Նոր Իսրայելի,
**երգով քաղցրութեան հընչմամբ զԱստուած օրհնեսցուք:**

Որ զօրութեամբ Հօր իմաստութեան էին անեղի. Հաստատեցին զաթոռ սրբոյն Գրիգորի՝ Թարգմանութեամբ նշանագրութեան.
**երգով...**
Որ խորհըրդեամբ ճըշմարիտ լուսոյ փառաց անեղին. Նըկարագրեցաւ մեզ գիր կենդանի յարգանդ մաքուր մեծին Մեսրոպայ. անմատոյց լուսոյն երկըրպագեսցուք. **երգով...**

# ԱՇԱԿԵՐՏՔ ՔՐԻՍՏՈՍԻ

*Ներսէս Շնորհալի*




²ß³ Ï»ñ ï Áù øñÇë ï áëÇ »õ ³é ³Ù»Ý³ÛÝ ï Ç»½»ñë
³é ³ù» ³Éù.
µ³ñ»Ëûë»ó¿ù ³é î¿ñ í³ëÁÝ Ù»ñ:

àñù ³éÇù Á½å³ ïáõ¿ñ ù³ñá½»É ³Ý»ñ ÏÇÕ ½µ³ÝÁÝ
Ï»Ý³ó ³ßË³ñÑÇ.
µ³ñ»Ëûë»ó¿ù ³é î¿ñ í³ëÁÝ Ù»ñ:

àñù ³ñÅ³ÝÇ »Õ¿ù ï»ë³Ý»É Ù³ñÙÝáí ½àñ¹ÇÝ ²ëïáõÍáÛ
Û³ÛïÝ³ å¿ë.
µ³ñ»Ëûë»ó¿ù ³é î¿ñ í³ëÁÝ Ù»ñ:

# ՍՏԵՓԱՆՆՈՍ ՔԱՂՑՐԻԿ ՏԱՏՐԱԿ










ê ï »÷ ³ ÝÝáë ù ³ ÕóñÇ Ï ï ³ ï ñ ³ Ï, êáõñµ ½Ááõ ³ ñÃáõÝ ³ ÝáõÝ åÁë ³ Ï. ·»Õ»ó Ï ³ ó ³ ñ ³ ÝûñÇÝ ³ Ï, µ ³ ÛóÝ»ñ Ï »ó ³ ñ ³ ñ» ³ Ý ·áõÝ ³ Ï. î» ³ éÝ ÚÇëáõëÇ ù ³ ç Ý ³ Ñ ³ ï ³ Ï, ³ Û·õáÛ ÝáñÇÝ í ³ ñ¹ Ù ³ Ýáõß ³ Ï: Â¿ å¿ ï Ù ³ ñÙÝá í` ë ³ Ï ³ ÛÝ Ññ»ß ï ³ Ï Ç øñÇë ï áë¿ ³ é¿ñ åÁë ³ Ï:

Îáã»Ùù ³ é ù»½ ëáõñµ Ý ³ Ñ ³ ï ³ Ï, ÑáÕ ³ ÝÇõÃ» ³ Û Ù ³ ñÙÝá í Ññ»ß ï ³ Ï. Ù ³ ñ ï Çñáë ëáõñµ »õ íÁ Ï ³ Û, áñ ù ³ ñ Ï áÍÙ ³ Ùµ Ï ³ ï ³ ñ»ó ³ ñ: Úáñ¹áñ ï ûÝÇë ùá ÑÁñ»ß ï ³ Ï, ³ ñ» ³ Ý ëÁñµáÛÝ Ñ»ÕÙ ³ Ùµ íÁ ï ³ Ï. ³ é î¿ñ ÉÇóÇ ëáõñµ å ³ ï ³ ñ ³ ·, å ³ Ñ»É Á½Ù»½ ÙÇß ï ³ ÝíÁ ï ³ Ý·:

# ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

Ներսէս Շնորհալի




Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա՛:
Բղխումն ի Հօրէ,
Բղխեա՛ ի հոգւոյս,
Բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գտող զիս արա՛:
Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բա՛ց,
Դասեցո՛ վերնոցն:

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա՛:
Զարթիր, Տէր, յօգնել,
Զարթո՛ ըզթմրեալս,
Զուարթնոց նմանիլ:

Էդ Հայր անսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ Սուրբ Հոգի:
Ընկա՛լ զիս, գթած,
Ընկա՛լ, ողորմած,
Ընկա՛լ, մարդասէր:

Թագաւո՛ր փառաց,
Թողութեանց տուող,
Թո՛ղ ինձ զյանցանս:
Ժողովող բարեաց,
Ժողովեա՛ եւ զիս
Ժողովս անդրանկաց:

Ի քէն, Տէր, հայցեմ,
Ի մարդասիրէդ,
Ինձ բժշկութիւն:
Լե՛ր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա՛
Խորհուրդ լուսաւոր:
Ծնունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա՛ զլոյս փառաց:

Կենարա՛ր փրկիչ,
Կեցո՛ զմեռեալս,
Կանգնեա՛ զգլորեալս:
Հաստեա՛ հաւատով,
Հաստատեա՛ յուսով,
Հիմնեցո՛ սիրով:

Ձայնիւս աղաչեմ,
Ձեռօքս պաղատիմ,
Ձիրբարեաց շնորհեա՛:
Ղամպարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո՛:

Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցո՛յց,
Ճեպել ի յերկինս:
Միածինդ Հօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,
Յիշեա՛ զիս, Քրիստոս:
Նորոգող հնութեանց,
Նորոգեա՛ եւ զիս,
Նորոգ զարդարեա՛:

Շնորհատու բարեաց,
Շնորհեա՛ զքաւութիւն,
Շնորհեա՛ զթողութիւն:
Ուրախացո՛, Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Որ վասն եմ ի սուգ:

Ձար մշակողին,
Ջար սերմանց նորին
Զօրացո՛ զպտուղն:
Պարգեւիչ բարեաց,
Պարգեւեա՛ իմոց
Պարտեացս թողութիւն:

Ջուր շնորհեա՛ աչացս,
Ջերմ հեղուլ արտօսր,
Ջրնջել ըզյանցանս:
Ռետինըդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո՛,
Ռա՛հ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճըմլեա՛,
Սիրտ իմ քարեղէն:
Վասըն գըթութեանդ
Վասն ողորմութեանդ,
Վերստին կեցո՛:

Տենչալւոյդ տեսլեամբ
Տո՛ւր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս:
Րաբունդ երկնաւոր,
Րոտեա՛ զաշակերտս
Րամից երկնայնոց:

Ցօղ արեան քո, Տէր,
Ցօղեա՛ ի հոգիս,
Ցրնծասցէ անձն իմ:
Իւծեալըս մեղօք,
Իւծեալ` աղաչեմ,
Իւսել ինձ բարիս:

Փրկիչ բոլորից,
Փութա՛ զիս փրկել
Փորձութեանց մեղաց:
Քաւիչ յանցանաց,
Քաւեա՛ զօրհնաբանս,
Քեզ երգել զփառս:

Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբ.
Յիշեա՛, Տէ՛ր, եւ ողորմեա՛:



# ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆԻ

Ներսէս Շնորհալի








*Աշխարհ ամենայն,*
*Առ իս նայեցեալ,*
*Ախտակից լերո՛ւք:*
*Բանամ գշրթունս,*
*Բարբառիմ լեզուաւս,*
*Բողոքիմ զանձնէս:*
*Տէր, ողոր., Տէր, ողոր., Տէր,*
*ողոր.:*

*Գող եղէ մեղաց,*
*Գրտող կորստեան,*
*Գուբ ինձ փորեցի:*
*Դաւեցի զանձն իմ,*
*Դաւաճանեցի,*
*Դարան գործեցի:*
*Տէր, ողոր. ....:*
*Երբեմն էի լոյս*
*Եւ այժմ եմ խաւար*
*Եւ ստուեր մահու:*
*Զիա՞րդ պատմեցից*
*Զթիւ մեղաց իմոց,*
*Զի բազում են յոյժ:*
*Տէր, ողոր. ....*
*Էրկինք եւ երկիր,*
*Եկա՛յք, ողբացէ՛ք*
*Եղկելի զանձն իմ:*
*Ընտրեցի զչարն,*
*Ընկալայ կամաւ*
*Ըզհոյլս մեղաց:*
*Տէր, ողոր. ...*
*Թաթաւիմ տղմով,*
*Թաւալիմ ի մեղս,*
*Թօթափիլ չկարեմ:*
*Ժանտ ախտիւ լըցեալ,*
*Ժահահոտ եղէ*
*Ժամանակս բազումս:*
*Տէր, ողոր. ...:*
*Ի բաց մեկնեցայ*
*Ի սուրբ խորհրդոց,*
*Ի բարեաց գործոց:*
*Լաւ վարկաւ անձն իմ,*
*Լուսոյն հեռանալ,*
*Լինիլ ընդ խաւար:*
*Տէր, ողոր. ....:*
*Խորհուրդըք չարին*
*Խաբեն զհոգիս,*
*Խորասոյզ առնեն:*
*Ծածկեն անդընդօք,*
*Ծիծաղին գլորմամբս,*
*Ծանակ զիս առնեն:*
*Տէր, ողոր. ....:*
*Կամաւ կորացայ,*
*Կարկամեալ անձամբ,*
*Կանգնիլ ո՛չ կարեմ:*
*Հուր մեղաց կիզող,*
*Հրդեհեաց որ յիս,*
*Հոգեւոր բարիս:*
*Տէր, ողոր. ...*
*Ձաղկեցայ մեղօք,*
*Ձաղեցին տեսողքն,*
*Ձանձրացաւ հոգիս:*
*Ղեղի դառնութեան*
*Ղօղեալ ի սիրտ իմ,*
*Ղամպար իմ շիջաւ:*
*Տէր, ողոր. ....:*
*Ճաշակմամբ մեղաց*

Ծաշեցի զմահ,
Ծոխս աղքատացայ:
Մեռեալ եմ հոգւովս,
Մոլորեալ մտօքս,
Միայն կամ մարմնովս:
Տէր, ողոր. ...:
Յորոգայթ մահու
Յորսողին անկայ,
Յաղթեցայ յախտից:
Նետից թշնամւոյն
Նշաւակ եղէ,
Նոր միշտ խոցոտիմ:
Տէր, ողոր. ...
Շուրջ պատեալ զինեւ
Շունք բազումք եղեն,
Շաղախին արեամբս:
Որս եղէ չարին,
Ուռկանաւ մեղաց
Որսացաւ անձն իմ:
Տէր, ողոր. ...:
Չարաչար վշտօք
Չարչարի անձն իմ,
Չունիմ դադարումն:
Պարտապան գտայ
Պարտուց յանցանաց,
Պարտեալս ի մեղաց:
Տէր, ողոր. ..:
Ջանամ զղջանալ,
Ջեռանիմ դարձեալ,
Ջեռնում հրով մեղաց:
Ռաբբի կոչեցայ,
Ռակայ անուանիմ
Ռամկական վարուքս:
Տէր, ողոր. ..:

Սիրով ցանկութեան,
Սաստիկ բարկութեան,
Սիրտ իմ խոցեալ է:
Վիրօք յանցանաց
Վշտանայ հոգիս,
Վարանեալ շրջիմ:
Տէր, ողոր...:
Տիրեցին ինձ չարք,
Տարադիր հանին
Տիրական գրկացն:
Րաբունւոյն բարւոյ
Րախճական ձայնին
Րոտինս ո՛չ լուայ:
Տէր, ողոր. ...:
Ցանկութիւն չարեաց
Ցանկալի դիմօք:
Ցաւեցոյց զաչս իմ:
Իիւրաքանչիւրոց
Իիւսմամբ խուռն ախ-
տից,
Իիւծեալ է հոգիս:
Տէր, ողոր. ...:

Փութացի՛ր, անձն իմ,
Փախչիլ ի չարեաց,
Փափագիլ բարեաց:
Քեզ միշտ մերձ ծանիր,
Քուն մահու եկեալ,
Քննող դատաւորն:
Տէր, ողոր. ..
Սուրբ Աստուածածնին բարե-
խօսութեամբ.
Յիշեա՛, Տէ՛ր, եւ ողորմեա՛:



# ՆԱՅԵԱՑ ՍԻՐՈՎ

Ներսէս Շնորհալի

Ա




Բ



Ժ




ԺԲ






## ՆԱՅԵԱՑ ՍԻՐՈՎ

**Ա. Ն**այեա՛ց սիրով, Հայրդ
գթած՝
Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.
Եւ զբանակս հրեշտակաց՝
Տո՛ւր պահապան մեզ
տկարացս.
Փրկեա՛ զանձինս ի
փարձանաց՝
Ի խաւարի շրջող դիւաց.
Զի ի տուընջեան եւ գիշերի՝
Տացուք քեզ փառս անլռելի:

Բ. Էին անեղ անըսկըզբան՝
Ծընունդ անճառ Որդի եւ Բան.
Որ արարեր ըզտիւ գործոյ
Եւ ըզգիշեր ի հանգիստ քնոյ՝
Տուր ի ննջել՝ աչաց մարմնոյ.
Արթուն լինիլ մեզ ըստ հոգւոյ.
գի:

**Գ. Ռ**աբո՛ւն հոգւոց
բանաւորաց՝
Աղբի՛ւր լուսոյ բաշխող
շնորհաց,
Ի փակիլ դրանց բնութեանց
մարմնոց՝
Լոյս տուր աչաց սրտից մերոց.
Ընդ հրեղինաց օրհնաբանել.
գի:

**Դ. Ս**ո՛ւրբդ սրբոց
Երրորդութիւն,
Ըզմեզ մաքրեա՛ քեզ
բնակութիւն.
Շնորհեա՛ ընդ մանկանցն
առագաստի՝
Հանգչիլ ընդ քեզ ի յանկողնի.
Տո՛ւր ըզհայցուած բարեկամին՝
Ըզփոխ երից նըկանակին. գի:

**Ե. Ե**րեւելի լոյս ըստեղծեր,
Զտիւ եւ զգիշեր բաժանեցեր.
Ծագեա՛ մեզ, Տէր, ի գիշերի
Ըզճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի
Զպահպանող աջ քո հովանի.
գի:

**Զ. Ս**իրոյ քո հուր արկեալ
յերկիր՝
Բորբոքեսցի ի հոգիս մեր.
Զխորհուրդ սրտից մեր
մաքրեսցէ,
Զլոյս գիտութեան քո
փայլեսցէ,
Ի քնոյ մահու զմեզ
զարթուսցէ,
Զմիտս բոցով քո վառեսցէ.
գի:

**Է. Ի** *քեզ նայիմք, լո՛յսդ անմատոյց,*
*Ի զգայական ծածկեալ լուսոյ.*
*Որ վասն մեր եղար ի գբի,*
*Եւ նրնջեցեր ի տապանի՝*
*Առ մեզ ննջեա՛, արթո՛ւն բնութիւն,*
*Հերքեա՛ զչարին ներգործութիւն.*
*զի:*

**Ը. Է***իդ լուսոյ անըստուերի*
*Պաղատանօք կամք առաջի.*
*Որ փակեալ դրամբք յերեկոյին՝*
*Երեւեցար մետասանին.*
*Ընդ Թովմայի առ քեզ գոչեմք՝*
*Տէր եւ Աստուած զքեզ դաւանեմք.*
*Էջ եւ առ մեզ յերեկոյիս՝*
*Եւ տո՛ւր զողջոյն քո ի հոգիս:*

**Թ. Ր***ամեալքս ըզքեզ, Տէր, աղաչեմք՝*
*Մեզ յօգնութիւն նայեա՛, հայցեմք,*
*Պահապանդ Իսրայէլի՝*
*Անձանց մերոց լե՛ր հովանի.*
*Օթեա՛ առ մեզ, խաղաղարար,*
*Զի ննջեսցուք անխռովաբար.*
*Եւ ընդ առաւօտըս կանխեսցուք*
*Օրհնել զքեզ ընդ Հօր հոգւով:*

**Ժ. Գ***ոչման փողոյն Գաբրիէլի՝*
*Որ ի վերջումն գիշերի,*
*Լըսել արա՛ մեզ արժանի,*
*Եւ յաջակողմն օդեաց դասի.*
*Անշէջ վառեալ զլոյս լապտերաց՝*
*Ըստ իմաստուն հինգ կուսանաց.*
*Զի ընդ փեսայիդ ի յառագաստ՝*
*Հարսունք հոգւով մտցուք ի փառս:*

ԺԱ. *Հալածեա՛ ի մէնջ, Տէր, նշանաւ խաչի քո զընդդիմամարտ եւ զանե-րեւոյթ գազանն. եւ մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնս:*

ԺԲ. **Բ***արեխօսեա վասն մեր, Աստուածածին Մարիամ, որ ծնար զՏէր Աստուած՝ որ հովուէրըն զԻսրայէլ՝ ամենազօր եւ սքանչելի փառօքն իւրովք:*

# Ի ՔԷՆ ՀԱՅՑԵՄՔ

1.



2.



բեռ - նեալք՝ թե - թե - ւա - ցո ի ծան-րու-թեանց մե - ղաց զան - ձինս,
եւ զօ - րա - ցո րան - նալ կա - մաւ ըզ - քաղ - ցըր լուծ
քոց պատ - ուի - րա - նաց:

3.


Պա - ղա - տի - մք առ քեզ հոգ-ւով ի հան - գըս - տեան
հաս-եալ ժա-մուս մար-դա-սէր Հո - գի Աս - տու - ծոյ.
յոր-ժամ նո-րոգես զե-րեսս երկ-րի, եւ վե-րըս-տին ստա-նաս
զո - գիս մարդ-կան. Նո-րա-փե-տուր զար-դար - եա
ըզ - նըն - ջե - ցեալ - սըն մեր ըզ - ծըն - եալսն ի քէն
սուրբ ա - ւա - զա - նաւն:

4.


Զկեն-դա-նա - գի - ր ա-նա-րատ ծը-նո-ղի
քո ար-կա-նեմք ա-ռա-ջի ա-նո-խա-կալ տէ-րու-թեա -
նըդ քո. յոր-ժամ զաս փա-ռօք Հօր դա-տել ըզ-թըշ-նա -
մին խա - չի քո նե-րեա յան-ցա-նաց մե-րոց
րա - րե - խօ - սու - թեամբ մօր քո եւ կու - սի.
21
ա - ղա - չեմք ըզ - քեզ Տէ - ր պահ - պան - եա ըզ -
24
մեզ ընդ հո-վան-եա - ւ խա - չի քո սուրբ:

5.


Հա - ղորդս ա - րա եւ ըզ-մեզ Տէր, ընդ սըր-բոց
քոց ա-ռա - քե - լոցն, որք ար-ժա-նի ե-ղեն տե-սա-նել
ըզ-Քեզ ի յա - րու - թեան քո. ար-ժա-նա-ւոր-եա




6.






**Ի** քէն հայցեմք, Հայր գթութեանց եւ Աստուած մխիթարութեանց. ի տխրական գիշերային մերձեալ ժամուս՝ մխիթարեա՛ զմեզ ի տրտմութեանց մեղաց՝ եւ շնորհեա՛ զուրախութիւն գործովք արդարութեան. աղաչանօք սուրբ Աստուածածնին՝ եւ ամենայն արդարոց:

Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի կոչման, Որդի Աստուծոյ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք եւ ծանրաբեռնեալք. թեթեւացո ի ծանրութեանց մեղաց զանձինս եւ զօրացո՛ բառնալ կամաւ զքաղցր լուծ քոյ պատուիրանաց. աղա:

Պաղատիմք առ քեզ հոգւով ի հանգստեան հասեալ ժամուս, մարդասէր հոգի Աստուծոյ. յորժամ նորոգես զերեսս երկրի, եւ վերստին ստանաս զոգիս մարդկան՝ նորափետուր զարդարեա՛ զննջեցեալսն մեր զծնեալսն ի քէն սուրբ աւազանաւն. աղաչանօք սուրբ Աստուածածնին՝ եւ ամենայն արդարոց:

Զկենդանագիր անարատ ծնողի քո արկանեմք առաջի անոխակալ տէրութեանդ քո. յորժամ գաս փառօք հօր՝ դատել զթշնամին խաչի քո. ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի, աղաչեմք զքեզ, Տէր, պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ. աղաչանօք սուրբ Աստուածածնին՝ եւ ամենայն արդարոց:

Հաղորդս արա եւ զմեզ, Տէ՛ր, ընդ սրբոց քոց առաքելոցն՝ որք արժանի եղեն տեսանել զքեզ ի յարութեան քո. արժանաւորեա՛, Տէ՛ր, տեսանել զքեզ ի միւսանգամ քո գալստեանն. օրհնութիւն առաքողին ի բարձունս: Աղաչանօք սուրբ Աստուածածնին՝ եւ ամենայն արդարոց:

Ի նստիլ քո յատենի, դատաւո՛ր ահեղ, աղաչանօք սուրբ Աստուածածնին, յիշեա՛ զննջեցեալսն մեր, յորժամ գայցես անճառ փառօք. քանզի քո են փառք յաւիտեանս. ամէն:

# ՍՈՒՐԲ ԵՍ, ՏԷՐ


1. Սուրբ ես Տէ - ր զօ - րու - թեանց որ բնա - կեալդ
ես - ի յե - ր-կինս. եւ բա - րե - րա - նի - - - ս
ի սրբ - բո - ց քո - - - - ց:
2. Երկ - նա - յի - ն զօ - րու - թիւնք Սե - րովբ - բէք
եւ Քե - րո - վ-բէք, ան - դա - դար օրհ - նե - - - ն-
սուրբ զա - նու - նըդ քո - - - - :
3. Քա-հա-նա - յք ընդ նո - սին պաշ-տօն-եայք եւ ժո - ղո - վուրդք
եր - կրր - պա - գեն - ցու - - ք Տէ - րու - թեա - նըդ քո - - :
4. Լոյսդ որ յա - ռաջ քան զյա - ւի - տեանսն ի Հօ - րէ
ա - ռա - քե - ցար, եւ լու - սով ի - մա - նա - լեաւ


լը - ցե - ր զա - րա - րածս. օ - րհ-նեա - - լ ես
Թա - գա - ւոր յա - ւի - տե - նի - - - ց:
5. Որ ը - գ-լոյսն ի սկըզ - բա - նէ հաս - տա - տե - ցե - ր
վե - րը - ս-տին. եւ զխա - ւարն ան - գի - տու - թեան
յա - րու-թեամ-բըդ քո հա - լա - ծե - ցեր. օ - րհ-
նեա - - լ ես Թա - գա - ւոր յա - ւի - տե - նի - ց:
6. Ուս - տի ե - ւ մեք լու - սա - ւո - ր-եալքս ընդ լու - սե - ղէ - ն
զը - ւա - րթ-նոցն եր - գեն - ցու - ք ըզն - ծու - թեանը
ի յա - րու - թեան ե - րե - կո - յիս. օ - րհ-
նեա - - լ ես Թա - գա - ւոր յա - ւի - տե - նի - ց:

Սուրբ ես, Տէր զօրութեանց, որ բնակեալդ ես ի յերկինս եւ բարեբանիս ի սրբբոց քոց:

Երկնային զօրութիւնք, Սերովբէք եւ Քերովբէք, անդադար օրհնեն սուրբ զանունդ քո:

Քահանայք, ընդ նոսին պաշտօնեայք եւ ժողովուրդք, երկրպագեսցուք տէրութեանդ քո:

Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեանս, ի Հօրէ առաքեցար, եւ լուսով իմանալեաւ լցեր զարարածս. **օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից:**

Որ զլոյսն ի սկզբանէ հաստատեցեր վերստին, եւ զխաւարն անգիտութեան յարութեամբ քո հալածեցեր. **օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից:**

Ուստի եւ մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուրթնոցն, երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյիս. **օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից:**

# ՏԷՐ, ՈՂՈՐՄԵԱ

ÎáÙÇï ³ë íñ¹






Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա,
Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա,

Ամենասուրբ Երրորդութիւն
Տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ հիւանդաց բժշկութիւն
Ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած հարցն մերոց
Որ ապաւէնդ ես նեղելոց:

Դաս յօգնութիւն ծառայից քոց
Լեր օգնական ազգիս հայոց:

Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա,
Յիսուս փրկիչ մեզ ողորմեա:

Սրբուհւոյ Աստուածածնին բա-
րեխօսութեամբ:

Յիշեա Տէր եւ ողորմեա:

# ՇԱՐԱԿԱՆ

Կազմեցին`
Տ. Կորյուն քահանա Մարտիրոսեանը և
Տ. Ղևոնդ քահանա Մայիլեանը

Համակարգչային շարվածքը և
ձևավորումը`
Գարեգին Սարգսյանի